ՀՏԴ 941(479.243) Պատմություն

Իսկուհի Ավանեսյան,
պատմական գիտությունների թեկնածու,
ԱրՊՀ , Պատմության ամբիոնի դասախոս,
e-mail: iskuhi82@mail.ru

ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ (1988-1994ԹԹ.)

Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակաշրջանում ծավալված զանգվածային բռնությունների ալիքը չկարողացավ կոտրել հայ ժողովրդի համառ կամքը: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ սանձազերծված բռնությունների դեմ բողոքի ձայն բարձրացրին կանանց հասարակական կազմակերպությունները, կին քաղաքական, հասարակական գործիչները, որոնք, քննադատելով Արցախում կատարվող բռնարարքները, պահանջեցին արդարացի լուծում տալ Արցախյան հիմնախնդրին: Չնայած հակառակորդի ճնշումներին՝ մեր կանայք հերոսաբար դիմակայեցին նրանց բոլոր մարտահրավերներին և իրենց նշանակալի տեղն ու դերն ունեցան հայ ժողովրդի համար խիստ կարևոր իրողությանը՝ ԼՂՀ կազմավորման գործընթացին:

Բանալի բառեր- կանայք, իրավունքներ, բռնություններ, բողոքներ, քաղաքականություն, պայքար, ժողովուրդ, հաղթանակ, բարեգործական, կազմակերպություն:

Искуи Аванесян
кандидат исторических наук,
преподаватель кафедры истории, АрГУ
e-mail: iskuhi82@mail.ru

ДЕЯТЕЛЬНОСТЬ ЖЕНЩИН В ОБЩЕСТВЕННЫХ -БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ И СОЮЗАХ В ГОДЫ НАЦИОНАЛЬНО- ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ АРЦАХА (1988-1994ГГ.)

Анализ событий указанного периода показывает, что волна массового насилия не сломила волю армянского народа. Исходя из создавшейся ситуации, с целью воспрепятствования актам насилия, общественные женские организации, политические и общественные деятели-женщины потребовали дать справедливое решение Арцахский проблеме. Несмотря на давление со стороны противника, наши женщины героически противостояли всем внешним вызован и заняли значимое место, сыграв существенную роль в необычайно важном для армянского народа этапе-процессе формирования НКР.

Ключевые слова- *женщины, права, насилия, жалобы, политика, битва, народ, победа, блоготворительность, организация.*

Iskuhi Avanessyan
Candidate of Historical sciences, Artsakh State University
e-mail: iskuhi82@mail.ru

THE WOMEN'S ACTIVITY IN PUBLIC- BENEVOLENT ORGANIZATIONS AND UNIONS IN ARTSAKH NATIONAL LIBERATIONAL STRUGGLE (1988-1994)

The analysis of events has shown that the mass violences could not break the will of Armenian people. In that situation the women's public organizations began to protest, the female politicians criticizing the violences demanded a fair solution to the problem of Artsakh people. Despite the enemy's pressures, our women heroically confronted their challenges and they had their place and role in that important reality, that is, the NKR formation

Key words *- women, rights, violence, complaints, war, politics, people, victory, benevolence, organization*

1918-1920 թթ. սկիզբ առած Արցախյան գոյապայքարին բաժին հասավ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը, որով Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին: 1923թ. Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հա-նրապետության կազմում ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ այդ կերպ սառեցնելով ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը:

Խորհրդային տասնամյակների ընթացքում Ադրբեջանը հայահալած, Արցախը հայաթափելու հետևողական քաղաքականություն էր իրականացնում տարբեր միջոցներով՝ բնակչության իրավունքները ոտնահարելով, տնտեսական ճնշումներով, խտրական կադրային քաղաքականությամբ և այլ կամայականություններով: Մարզի բնակչության պարբերաբար դիմումները, ուղղված պետական ատյաններին՝ պատմական արդարությունը վերականգնելու խնդրանքով, մերժվում էին:

1988թ. Արցախյան շարժումը ազգային զարթոնք էր, որը սկսվեց որպես պայքար հանուն ժողովրդավարության և ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրագործման, սակայն Ադրբեջանի սադրիչ քաղաքականության հետևանքով վերաճեց ռազմական առճակատման:

Արցախյան շարժման և, ընդհանուր առմամբ, արցախահայության ազգային-ազատագրական պայքարի ուշագրավ ու կարևոր առանձնահատկություններից էր կանանց զանգվածային ու բուռն մասնակցությունը: Նրանց մեծաթիվ և ակտիվ մասնակցությունը նկատվեց հատկապես ազատագրական պայքարին աջակից մի շարք հասարակական-բարեգործական ընկերությունների և միությունների շարքերում:

1988թ. Արցախում ծավալված իրադարձությունները պատճառ դարձան, որպեսզի վերականգնվի «Գետաշեն» հայրենակցական բարեգործական միությունը, որը կազմակերպվել է դեռևս 1967 թվականից: 1988թ. մայիսի 14-ին Գետաշենում գումարվեց միության առաջին նիստը, որին մասնակցում էին երևանաբնակ մի խումբ գետաշենցիներ և Գետաշենի ղեկավարները: Նիստում հաստատվեց միության վարչության կազմը, որի մեջ կանանցից ընդգրկված էին Ռիտա Չիլինգարյանը (վարչության քարտուղար, տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ), Դոնարա Նալբանդյանը (տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ), Լիլիթ Նալբանդյանը (բուժսպասարկման հանձնախմբի պատասխանատու), Արևիկ Միսյանը (բուժսպասարկման հանձնախմբի անդամ) և Սուսաննա Միսյանը (տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ): Միության խնդիրը Արցախի հյուսիսային դարպասը հանդիսացող Գետաշենի ենթաշրջանին և Շահույանի շրջանին բազմակողմանի օգնության կազմակերպումն էր: Բարեգործական ընկերության աշխատանքները ընթանում էին հիմնականում երեք ուղղությամբ՝ տնտեսական, գաղափարաքաղաքական և ռազմական: Միության կանայք հանրահավաքներում հանդես էին գալիս հրատապ ելույթներով, մամուլում՝ հոդվածներով, օդային միակ կապի միջոցով՝ ուղղաթիռով այցելություններ էին կատարում Գետաշեն՝ տանելով դեղորայք և սննդամթերք, ինչի անհրաժեշտությունն ուներ Հյուսիսային Արցախը[1]: Սոցիալ-տնտեսական ոլորտում բարեփոխումներ կազմակերպելուց բացի, միությունը զբաղվում էր նաև երկրի ինքնապաշտպանության հարցերով, ինչպես նաև անդրադառնում կանանց նախաձեռնություններին: 1991թ. փետրվարի 10-ին Երևանում տեղի ունեցած «Գետաշեն» հայրենակցական-բարեգործական միության ընդլայնված նիստում քննարկվեց նաև Գետաշենի կանանց կողմից Հայաստանին ուղղված դիմումների հարցը: Հատկապես նիստի որոշման 7-րդ կետում ասվում է. «Հետևել Գետաշենի կանանց կողմից Հայաստանի իշխանություններին ուղղված դիմումների ընթացքին»[2]:

Գետաշենի ենթաշրջանին և Շահումյանի շրջանին մեծապես օգնում էին Հայաստանի կոոպերատիվների միությունը(1988թ. աշնանը): Ստեփանակերտում գործող մասնաճյուղի անդամներ էին Արաքսյա Հայրապետյանը, Վալյա Մեհրաբյանը և ուրիշներ[3]: Նրանց ուղեկցությամբ ուղղաթիռների միջոցով օգնություն էր կազմակերպվում Հյուսիսային Արցախի հայ բնակչությանը:

Արցախում ստեղծված իրավիճակով մտահոգված, խորհրդային մի շարք կին մտավորականներ, որոնք առանձին, թե հասարակական կազմակերպությունների կազմում, փորձում էին նպաստել իրավիճակին՝ հանդես գալով հայտարարություններով և նախաձեռնություններով: Հարկ է նկատել, որ հասարակական կազմապերպությունների կարևոր խնդիրներից մեկն էր նպաստել Արցախի հիմնախնդրի դրական լուծմանը: «Մոսկովսկայա տրիբունա» հասարակական կազմակերպությունը, որի շարքերը համալրել էր նաև Գալինա Ստարովոյտովան[4], աչքի էր ընկնում Հայաստանին, մասնավորապես Արցախին վերաբերող հարցերի նկատմամբ իր անաչառ, սկզբունքային դիրքորոշմամբ: Կազմակերպության նախաձեռնություններից էր 1991թ. մարտի 3-ին ընդունած դիմումը՝ ուղղված Հայկական ԳԽ-ին, ինչպես նաև հայտարարությունը՝ Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Այդ փաստաթղթերում պաշտպանվում էին Արցախի բնակչության շահերը և դատապարտվում Ադրբեջանի մարդասպանները, պահանջվում դատի տալ, պատժել հանցագործներին, վերականգնել ԼՂԻՄ իշխանությունների պետական կառուցվածքը, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը ենթարկել Կենտրոնին ու նրանց հանձնարարել խաղաղարարություն և ոչ թե պատժիչ գործառույթներ[5]: Ի պաշտպանություն արցախահայությանը՝ հայտարարությամբ հանդես է գալիս «ԿՐԻԿ»-ը՝ Ռուսաստանի մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեն: Նրա հիմնադիր 22 անդամների թվում էին նաև Գալինա Նույկինան, Գալինա Ստարովոյտովան, Ինեսա Բուրկովան, Սեդա Վերմիշևան, Անահիդա Բեստալաշվիլին[6]: Նրանցից ոմանք գոյապայքարի տարիներին բազմաթիվ անգամ այցելել են Արցախ, տեղում ուսումնասիրել իրավիճակը, իրենց հրապարակային ելույթներում ներկայացրել իրական պատկերը՝ ահազանգելով կատարվող անօրինությունների դեմ: 1991թ. «ԿՐԻԿ»-ի հիմնադիր ժողովը ԽՍՀՄ իշխանություններին ներկայացնում է մի շարք խնդիրներ, որոնցում կար հետևյալ ուշագրավ պահանջը. «ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի սահմաններում

[1] Տեմ՛ Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., Գետաշեն, Երևան, 2007, էջ 306-308:
[2] Նույն տեղում, էջ 338-339:
[3] «Ազատ Արցախ», 2003, 20 հունիսի:
[4] Հասարակական միությունը ստեղծվել է 1988 թվականին, որը միավորել է Մոսկվայի ժողովրդական մտավորականության լավագույն ուժերը: Դրա գաղափարախոսը մինչև կյանքի վերջ հանդիսանում էր Անդրեյ Սախարովը:
[5] Տեմ՛ «Հայաստանի Հանրապետություն», 1991, 6 մարտի:
[6] ”Правда”, 1991, 20 августа. «ԿՐԻԿ»-ը (Комитет российской интелигенции Карабах) ստեղծվել է 1991թ. մարտի 20-ին՝ Ռուսաստանի գրողների «Ապրիլ» ընկերության անդամների կողմից:

ժողովրդագրական իրավիճակի կանխամտածված փոփոխման հանգեցնող քաղաքականության կասեցում»[1]: Կազմակերպության առաջին իսկ միջոցառումների մեջ ծրագրվեց նախատեսել բժշկական օգնություն Արցախի բնակչությանը, իրականացնել մարզի գյուղերի տնտեսության բազմակողմանի ուսումնասիրություն և օգնություն, ինչպես նաև բոլոր պաշտոնական շրջանակներում բարձրացնել մարզի խնդիրները[2]:

Կանանց մասնակցությամբ հայկական մի շարք հասարակական կազմակերպություններ, միություններ բարեգործական աշխատանքներ կատարելուց բացի, միջազգային ասպարեզում տեսակետ ձևավորելու նպատակով, նախապատրաստում և տարբեր երկրների ատյանների էին ուղղում բազմաթիվ դիմումներ, բողոք-նամակներ, պատմական արդարությունն ապացուցող փաստարկներ: Այդ բոլորի կողքին իր ուրույն տեղն ունի 1988թ. նոյեմբերին Երևանում ձևավորված «Արցախ» հայրենակցական միությունը, որի գործադիր մարմնի քարտուղարն էր շարժման մասնակից Լարիսա Ալավերդյանը: Միությունը հենց սկզբից հնարավոր բոլոր միջոցները ներդրեց Արցախի պաշտպանության գործում: Համաձայն միության կանոնադրության առաջին հոդվածի՝ «Արցախ» հայրենակցականը արցախցիների կամավոր բարեգործական միություն է, որը նպատակ է հետապնդում նպաստել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական, մշակութային և հոգևոր վերածննդի ու հետագա բարգավաճմանը[3]: Այդ և հաջորդ տարիներին տարբեր տեղերում բացվեցին բարեգործական ներկայացուցչություններ, որոնցում ընդգրկվեցին մեծ թվով կանայք[4]:Նրանք շատ աշխատանքներ էին տանում վիրավոր ազատամարտիկներին, բռնագաղթածներին և փախստականներին օգնություն ցույց տալու գործում:

1992-1993թթ. զգալի աշխատանքներ կատարեց հատկապես միության մեջ մտնող «Ջրաբերդ» շրջանային կազմակերպությունը: Քնարիկ Աթաբեկյանի և կազմակերպության մյուս անդամների խնդիրն էր օգնություն ցույց տալ Մարտակերտից բռնագաղթածներին և փախստականներին: Նրանց ուղեկցությամբ ուղղաթիռները պարբերաբար Մարտակերտի շրջան էին տեղափոխում մթերք և պաշտպանության միջոցներ ու վերադառնում՝ բերելով վիրավորների, երեխաների, կանանց ու ծերունիների: Լաչինի միջանցքի բացումից հետո հարյուրավոր տոննաներով անհրաժեշտ բեռը ուղարկվում էր արդեն ավտոշարասյուններով: Ստեփանակերտում ևս բացվեց միության բարեգործական ներկայացուցչություն, որը ղեկավարում էր միության լիազոր, շարժման մասնակից Աղավնի Դանիելյանը[5]:

Հայրենակցականի համաժողովներում օրակարգային հարցերն էին՝ Արցախում գյուղական և շրջանային համայքների ստեղծում, արցախցի կանանց և ուսանողների ներգրավումը միության աշխատանքներին, տնտեսական գործունեության ընդլայնում և այլն:

Արցախում առկա իրավիճակը ստիպեց միության գործունեությունը բարեգործականից փոխադրել քաղաքական, ռազմական պայքարի հարթակ: Դա ժամանակի հրամայականն էր: «Արցախ» հայրենակցականը համագործակցում էր մի շարք կազմակերպությունների հետ, տեղեկատվական նյութեր տարածում հիմնահարցի վերաբերյալ: Միության կանայք ակտիվ էին, մանավանդ հանրահավաքների ժամանակ [6]: Հարկ է նկատել, որ միության քարտուղար Լարիսա Ալավերդյանը գործուն մասնակցություն ուներ փախստականների տեղաբաշխման, օրենսդրական, կազմակերպչական, տեխնիկական և մարդասիրական խնդիրների ապահովման, հակամարտության իրավական և քաղաքական լուծումների վերաբերյալ փաստաթղթերի պատրաստման ու տարածման, պատանդների, ռազմագերիների փոխանակման աշխատանքներին[7]:

Միության մասնակցությամբ 1991թ. օգոստոսի 14-18-ին Մոսկվայում կայացավ «Եվրոպայի միջուկային զինաթափման միջազգային հասարակական շարժման» 10-րդ կոնֆերանսը: Միջոցառմանը մասնակցում էին նաև «Հայ կանանց միություն», «Զինվորի մայր», հասարակական կազմակերպությունները: Հայկական ՀԿ-ների ներկայացուցիչները ներկաների շրջանում տարածեցին տեղեկատվական նյութերի ծրարներ՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով, որոնցում մերկացվում էր «Օղակ» հանցավոր ռազմագործողությունը: Ցուցադրվեցին նաև լուսանկարներ, որոնք ստույգ տեղեկություններ էին պարունակում Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատագրական պայքարի մասին: Հարկ է նկատել, որ «Արցախ» հայրենակցականի կին-անդամներն իրենց հրապարակախոսական նյութերում, հոդվածներում, հարցազրույցներում հանգամանալից պարզաբանում էին արցախյան հիմնախնդիրը, այն ներկայացնում միջազգային հանրությանը և նպաստում դրա միջազգայնացմանը[8]: Միության հետ համագործակցում էին Ելենա Բոները, Գալինա Ստարովոյտովան, Քերոլայն Քոքսը, Ցվետանա Պասկալևան: Վերջինս հաճախ հայրենակցականի աջակցությամբ նկարահանումներ էր կատարում Արցախում:

---

[1] Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX- XX դարեր, Երևան,2012, էջ 496:
[2] Հակոբյան Թ., Կանաչ ու Սև Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 95-96:
[3] Աբրահամյան Հ., Մարտ կրակագծի մատույցներում, Երևան, 2008, էջ 30:
[4] Նույն տեղում, էջ 31:
[5] Ստեփանակերտում միության գրասենյակը գործում էր սկսած 1990թ. փետրվարից:
[6] “Зов Арцаха”, 1993, 3 марта, N 1.
[7] Խաչատրյան Հ., Հայուհիներ, Երևան, 2001, էջ 26:
[8] Տես՝ “Зов Арцаха”, 1993 март, N 1.

Հասարակական ակտիվ գործունեությամբ առանձնանում էր նաև 1991թ. Գրետա Միրզոյանի նախաձեռնությամբ հիմնադրված «Զինվորի մայր» կազմակերպությունը, որը գործում է առայսօր[1]: 1992-1994թթ. կազմակերպության անդամները ոչ միայն խնամում էին արցախյան մարտադաշտերում վիրավորված զինվորներին, այլև պատերազմի շրջանում մեծ նվիրումով իրականացնում մի շարք հասարակական ծրագրեր՝ օգնություն փախստականներին, բռնագաղթածներին:

Արցախի համար դժվարին օրերին ծնվեցին «Գթություն», «Հիշատակ», «Մայրություն» հիմնադրամներն ու մարդասիրական կազմակերպությունները, որոնց նախաձեռնողները հիմնականում կանայք էին: Այդ կազմակերպություններն օգնություն էին ցուցաբերում հաշմանդամներին, կարիքավոր ընտանիքներին, փախստականներին: Կինխորհրդի նախաձեռնու-թյամբ «Գթություն» բարեգործական միությունը և «Մայրություն» հիմնադրամը կազմակերպում էին կանանց խմբեր, որոնք գուլպաներ էին գործում և ուղարկում ազատամարտիկներին, ինչպես նաև կատարում մի շարք այլ հասարակական աշխատանքներ:

Արցախյան շարժման ու պայքարի կիզակետում՝ 1988թ. մայիսի 25-ին, (բանաստեղծուհի) Մարո Մարգարյանի նախաձեռնությամբ Ստեփանակերտում ստեղծվեց «Մայրություն» հիմնադրամը, որի նախագահ ընտրվեց շարժման մասնակից Հասմիկ Միքայելյանը: Կազմակերպության ստեղծմամբ Արցախում ձևավորվեց կանանց շարժում: Հիմնադրամի նշանաբանն էր՝ «Գթասրտություն առանց սահմանի»[2]: Ազատագրական շարժման հենց առաջին օրվանից կազմակերպությունը դարձել էր քաղաքական շտաբ՝ ազգային ինքնորոշման իրավունքի համար մղվող պայքարում: Կազմակերպությունն ինքնապաշտպանական ջոկատներին օգնում էր ոչ միայն սննդամթերքով, դեղամիջոցներով, դոնորական միջոցներով, այլև խնամք էր իրականացնում հոսպիտալներում: Հաշմանդամներին, անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելուց, Ադրբեջանից բռնագաղթածների ընդունման աշխատանքներին մասնակցելուց բացի, հիմնադրամն Արցախի կանանցից պատգամավորական խմբեր էր գործուղում տարբեր երկրներ՝ տեղերում հավաքներ կազմակերպելու նպատակով:

1991թ. «Օղակ» ռազմագործողության ժամանակ կատարվող սարսափելի դեպքերի առթիվ «Մայրության» հիմնադրամը հեռագրով դիմում է նաև Մոսկվային, որտեղ հաղորդվում է, որ ադրբեջանական օմօնականների հրոսակախմբերը ԽՍՀՄ ներքին զորքերի օժանդակությամբ իրականացնում են հայերի բռնի տեղահանություն և կոչ էր անում բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ բողոքի ձայն բարձրացնելու, կասեցնելու մարդկային իրավունքների ոտնահարման բոլոր փորձերն ու պահանջել խորհրդային երկրի նախագահից անհետաձգելի միջոցներ ձեռնարկել անմեղ մարդկանց սպանությունները դադարեցնելու համար[3]: «Մայրություն» հիմնադրամի պատվիրակները 1992թ. հոկտեմբերին, մասնակցելով Երևանում տեղի ունեցած կանանց միջազգային ժողովին, նիստում հանգամանալի ներկայացնում են Արցախում տիրող ծանր իրավիճակը, աշխարհի կանանց միջազգային կազմակերպությունից պահանջում կոնկրետ գործնական մասնակցություն ցուցաբերել հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: Հանձնաժողովը ընդունում է հռչակագիր, որով աշխարհի կանանց կոչ է անում համախմբել ժողովրդավարական ուժերին՝ հանուն մարդու իրավունքների հաստատման և խաղաղության, ընդդեմ բռնության և պատերազմի[4]: Հետագայում «Մայրություն» հիմնադրամը ստեղծեց «Մարտական երախտագիտության Արցախի քաջորդիներին» մեդալը, որի առաջին հանձնումը տեղի ունեցավ 1993թ. մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրության առաջին տարեդարձի օրը[5]:

1988-1991թթ.Ադրբեջանում ամենուրեք հայ ազգաբնակչության նկատմամբ իրագործվող բռնարարքները ստիպում էին տեղահանվել, հեռանալ իրենց բնակության վայրերից: Ամեն օր Արցախ և Հայաստան էին ժամանում Ադրբեջանի տարբեր բնակավայրերից բռնագաղթած հարյուրավոր հայ ընտանիքներ՝ ծեծված, թալանված: Հասարակական կազմակերպություններում ընդգրկված և, առհասարակ, առանձին գործող կանայք մի շարք աշխատանքներ էին տանում՝ բռնագաղթած հայ ընտանիքներին օգնելու համար: Կանանց նախաձեռնությունները և տարբեր միջոցառումներին մասնակցությունը նպատակ էին հետապնդում դադարեցնելու երկրում տիրող անօրինականությունները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկելու երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար: Նրանց անգնահատելի գործունեության շնորհիվ Արցախում առկա իրավիճակը հայտնի դարձավ աշխարհի տարբեր երկրներում: Այս իրողությունն ապացուցեց, որ կինն իր պահանջներում սկզբունքային է և կարող է լինել անզիջում: Պատերազմի օրերին և հետագայում կանայք իրենց հասարակական նախաձեռնություններով կարողացան նպաստել Արցախի սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացին:

---

[1] Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, Երևան, 2011, էջ 102:

[2] Տես՝ «Հայաստանի Հանրապետություն», 1993, 15 մայիսի:

[3] Տես՝ “Голос Армении”, 1991, 15 мая.

[4] Տես՝ «Արցախ», 1992, 23 հոկտեմբերի:

[5] Տես՝ «Հայաստանի Հանրապետություն», 1993, 15 մայիսի: